



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 99**

05 մարտի 2019թ.

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշումը և համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Իրինա Աբրահամյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Ծաղկաձոր համայնքի բնակիչ Իրինա Աբրահամյանին տրամադրել դրամական օգնություն 40 000(քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ առաջացած սոցիալական և առողջական խնդիրները լուծելու նպատակով :



**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 100

05 մարտի 2019թ.

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 124-րդ կետով և հիմք ընդունելով Արմեն Խաչիկի Խաչատրյանի համատեղ դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմեն Խաչիկի Խաչատրյանին տրամադրել ք. Ծաղկաձոր, Պաիլավունյաց փողոց, թիվ 72 հասցեում հանգստի տնակների և պարսպի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողություն իրականացումը:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻ Վ 101**

07 մարտի 2019թ.

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշուման N 5 հավելվածով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ հնժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Ալվարդ Վարուժանի Մովսեսյանի լիազոր ներկայացուցիչ Գոռ Չախոյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքի Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 11/43 հասցեում գտնվող, Ալվարդ Վարուժանի Մովսեսյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնական կառուցված 347,7 քառ.մ արտաքին մակերեսով քոթեջը և 0,6 քառ.մ մակերեսով պարիսպը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 1 811 160 (մեկ միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:
4. Քոթեջի շինարարությունը ավարտին հասցնելու համար Ալվարդ Մովսեսյանին տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք և տրամադրել հասցե ք.Ծաղկաձոր Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 11/43:



**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 102

07 մարտի 2019թ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԼԵՌՆԱՏՈՒՐ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 38 հասցեում՝ 750 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ մտնում ստորագրման պահից:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 103**

12 մարտի 2019թ.

**ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշումը և համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Էդվարդ Վաչագանի Հարությունյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Ծաղկաձոր համայնքի բնակիչ Էդվարդ Հարությունյանին տրամադրել դրամական օգնություն 70 000(յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, երեխայի՝Արման Էդվարդի Հարությունյանի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»-ի ուսման վարձը վճարելու նպատակով :



**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 104

12 մարտ 2019թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գրությունը և վարչական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 12-ի նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարճել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով /գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելը/ հարուցված վարչական գործի վարույթը՝

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:



*[Handwritten signature]*

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 105

12 մարտ 2019թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169<sup>1</sup>-րդ հոդվածի 2-րդ մասով 219<sup>1</sup>-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 12-ի նիստի արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. "Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե" հասարակական կազմակերպության /ՀՎՀՀ 02515951, հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց փողոց, թիվ 9/ նկատմամբ՝ գույքահարկի և հողի հարկի հաշվարկը սահմանված ժամկետում տեղական ինքնակառավարման մարմին չներկայացնելու համար, նշանակել վարչական տուգանք 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
**ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 106**

12 մարտի 2019թ.

**ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Ծաղկաձոր համայնքում Վազգեն Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,06 հա մակերեսով 07-005-0015-0014 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Նոր թաղամաս, 2-րդ փողոց, թիվ 20:



**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

**ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 107**

13 մարտի 2019թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ  
ԻՐԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «Լեռնատուր» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 38 / տրամադրել՝

- 1) 2019 թվականի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 493քմ տարածքում,
- 2) 2019 թվականի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 493 քմ տարածքում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 108

14 մարտ 2019թ.

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 89 ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 21-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 89 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. "ՂԻՋԻԳԵՅՄ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /ՀՎՀՀ 02665848, հասցե՝ ք. Երևան, Ամիրյան փողոց, թիվ 26/ տնօրեն Հարություն Վարդանյանի նկատմամբ վիճակախաղերի կազմակերպման օրյեկտները առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատացնելու համար նշանակել վարչական տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով::

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրվանից:



ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 109**

20 մարտի 2019թ.

**ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «ՊՐԵՍ ՍԵՆԴ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, թիվ 13 շենքի հարակից տարածք /տրամադրել՝

1) 2019 թվականի ընթացքում ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 7քմ տարածքում,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



**ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**